ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԽԱՐԲԵՐԴԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ
ՄԱՆԿԱՏՈՒՆ»
ՊՈԱԿ

REPUBLIC OF ARMENIA MINISTRY
OF LABOUR AND SOCIAL ISSUES
"SPECIALIZED
CHILDREN'S
HOME OF KHARBERD"
SNCO

Մասիսի տեղական գանձ.բաժանմունք
հ/հ 900438000318

# ՈՐՈՇՈՒՄ

08.02.2024թվականին ՀՀ Աշխատանքի և Սոցիալական հարցերի նախարարության/ի դեմս Ս.Մուրադյանի/ և «Լևոն Ալավերդյան»ԱՁ-ի միջև կնքված «Խարբերդի մասնագիտացված մանկատուն»ՊՈԱԿ-ի կարիքների համար *սննդամթերքի մատակարարման «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/4-ԵԽ-4-1-Խ»* ծածկագրով պայմանագիրը
միակողմ և մասնակի լուծելու մասին.

## ՊԱՐԶԵՑԻ

08.02.2024թվականին ՀՀ Աշխատանքի և Սոցիալական հարցերի նախարարության/ի դեմս Ս.Մուրադյանի/ և «Լևոն Ալավերդյան»ԱՁ-ի միջև կնքվել է «Խարբերդի մասնագիտացված մանկատուն»ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի մատակարարման «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/4-ԵԽ-4-1-Խ» ծածկագրով ծածկագրով:

Համաձայն վերը նշված պայմանագրի 1.1 կետի պահանջների սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ին և «Լևոն Ալավերդյան» ԱՁ-ն պետք է մատակարարի պայմանագրի հավելվածով և տեխնիկական բնութագիր-գնման–ժամանակացույցով նախատեսված սննդամթերքները, մասնավորապես, կարտոֆիլը,լոլիկը,դդմիկը և ձմերուկը,իսկ «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ը պարտավորվում է ընդունել ապրանքները ու վճարել դրանց համար/տես պայմանագրի առարկան 1.1կետը/:

«Խարբերդի մասնագիտացված մանկատուն»ՊՈԱԿ-ի պատասխանատու անձի կողմից կազմվել են հայտեր,արձանագրություններ և դրանցով սահմանվել են ժամկետներ տեխնիկական բնութագրով սահմանված սննդամթերքները մատակարարելու վերաբերյալ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և այն փաստական հանգամանքը, որ մինչև օրս «Լևոն Ալավերդյան»ԱՁ-ի կողմից չեն պահպանվում պայմանագրով սահմանված էական պայմանները, մասնավորապես,վերը թվարկված ապրանքներից կարտոֆիլը և լոլիկը չի մատակարարվում համաձայն տեխնիկական բնութագրով սահմանված չափորոշիչով/տրամագիծ,խմբաքանակ,տոկոսային ընդհանուր քանակ/,ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ««ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/4-ԵԽ-4-1-Խ ծածկագրով կնքված պայմանագրի պահանջներից, անհրաժեշտություն է առաջացել միակողմանի և մասնակի լուծելու 08.02.2024 թվականին /«Խարբերդի մասնագիտացված մանկատուն»ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի մատակարարման «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/4-ԵԽ-4-1-Խ ծածկագրով կնքված պայմանագիրը:

«Խարբերդի մասնագիտացված մանկատուն»ՊՈԱԿ–ի պատասխանատու անձի կողմից կազմվել են հայտեր,արձանագրություն և դրանցով սահմանվել են ժամկետներ տեխնիկական բնութագրով սահմանված սննդամթերքները մատակարարելու վերաբերյալ:

04.06.2024թվականից մինչև 20.08.2024թվականը «Վաճառողը» «Գնորդին» սննդամթերքը մատակարավել է պայմանագրի էական պայմանի խախտմամբ, այն է չի մատակարարվել համաձայն տեխնիկական բնութագրով սահմանված չափորոշիչի, իսկ տեխնիական բնութագրով նախատեսված մյուս ապրանքները համաձայն հայտերի դեռևս շարունակվում են պատշաճ մատակարարվել:

Նույն պայմանագրի 8.9 կետի դրույթների համաձայն Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում նշելով հրապարակման ամսաթիվը:Վաճառողը,պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ,համարվում է պատշաճ ծանուցված ծանուցումը,սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սննդամթերքը լոլիկը և կարտոֆիլը մատակարարվել են պայմանագրով սահմանված էական պայմանների ակնհայտ խախտմամբ.ուստի ղեկավարվելով պայմանագրի էական պայմանների պահանջներից.

## *ՈՐՈՇԵՑԻ*

__1/2024թվականի օգոստոսի 23-ին միակողմ և մասնակի լուծելու__ 08.02.2024թվականին ՀՀ Աշխատանքի և Սոցիալական հարցերի նախարարության/ի դեմս Ս.Մուրադյանի/ և «Լևոն Ալավերդյան» ԱՁ-ի միջև կնքված «Խարբերդի մասնագիտացված մանկատուն»ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի մատակարարման «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/4-ԵԽ-4-1-Խ» ծածկագրով պայմանագիրը:

2/Օրենքով սահմանված կարգով և ժամկետում ծանուցել «Լևոն Ալավերդյան»ԱՁ-ին պայմանագրի լուծման վերաբերյալ :

3/Կատարել մատակարարման պայմանագրով սահմանված բոլոր անհրաժեշտ գործողությունները:

Հարգանքով

Տնօրեն Հ.Բալասանյան

Արարատի մարզ, գ. Նոր-Խարբերդ
☎ 0236 6 00 25 (Մասիս) (Նոր Խարբերդ)
091 42 79 60
էլ.հասցե՝ kharberd-mankatun@mail.ru

Ararat Marz, Nor Kharberd
☎ 0236 6.00 25 (Masis) (Nor Kharberd)
091 42 79 60
e-mail: kharberd-mankatun@mail.ru